

որդիները կամ սաները բարձր լինին իրենից, պէտք է աշխատէ նախ իւր բնաւորութիւնը կազմակերպել, արմատախիչ անել իւր վատ հակումները և ձեռք բերել բարի ձրդատումներ. այն ժամանակ նա կտայ մանկանց ո՛չ միայն ոյժի մեծ պաշար, այլ որ բարոյական տեսակետից աւելի կարեւոր է՝ կսովորեցնէ նրանց իւր օրինակով ինքնակատարելութեան դիմելու, միշտ առաջ գնալու, որն և կազմում է մարդու բարձր կոչումը նորա երկրաւոր կեանքի ընթացքում: Սորանից պարզ երևում է, որ չի կարելի գծել դադարի համար գործնական մի սահման, որին պիտի ձգուէ բարոյական գաստիարակութիւնը ընդհանրապէս բոլոր մարդկանց համար. ամէն մէկը պէտք է կատարէ գոնէ այնքան, որքան թոյլ են տալիս իւր ոյժերը:

(Քաղեց) Ա. Ե. Ետեհագարեան

(Շարունակելի)



Մ Ե Ր Մ Ս Մ Ո Ւ Լ Ը .

Կվերցնենք այս անգամ «Մուրճ»ի ներկայ թուականի առաջին երեք համարները: Հաճելի է թերթել այդ ստուար, քազմակողմանի բովանդակութիւն ունեցող տետրակները. զգում ես, որ դրական, մտածող, իրենց շուրջը դիտող մարդոց հետ զործ ունիս, որ այնչափ էլ ողորմելի չէ եւ անմխիթարական մեր հրապարակային կեանքը, ինչպէս սովորաբար պատկերացնում ենք ու հաւատացնում մեզ եւ ուրիշներին. զրական ասպարիզի վերայ մի բան կատարում է, ցրուած ուժերը կամաց կամաց սկսում են կարծես համախմբուիլ, նոր մարդիկ են հանդէս գալիս՝ նոր պահանջներով, ընդհանուր զործի համար միասին զործելու

լուրջ ցանկութեամբ, եւ «Մուրճ»-ը դառնում է այդ խմբակ-
ցութիւններից մէկի կենտրոնը: Կարելի է հանգիստ սրտով
ասել, որ նա լաւ է խմբագրուում այժմ: Յիրաւի մի հաս-
տատուն որոշ ուղղութիւն՝ մի տիրապետող գաղափար, որ
ամբողջն է մի ձուլէր, հասարակական կեանքի մէջ նոր հո-
սանք յառաջ բերէր ու նոր ճանապարհներ բանար, — մենք
չենք տեսնում: Ըայց նիւթերի խնամքով ընտրութիւն եւ
խնամքով մշակութիւն երեւում է: Ուրիշ հարց է, թէ ար-
դեօք նա քաւականութիւն տալիս է բոլոր այն պահանջնե-
րին, որ կարելի էր անել հրապարակի վերայ եղած մեր
միակ լուրջ «գրական, հասարակական եւ քաղաքական ամ-
սագրից»: Կարելորն այն է, որ նա ընթերցանութեան առատ
նիւթ է տալիս, եւ ո՛չ պատահաբար՝ այլ ըստ մեծի մասին
թարմ, օրուայ խնդիրները պարզաբանելու եւ օգտակար
գիտելիքներ հաղորդելու նպատակով յատուկ պատրաստուած
նիւթ:

Գրական քաժնի մէջ առաջին տեղը բռնում է Ա. Ա.
հարոնեան իւր «Մրրկի սուրբը» վէպով: Ահարոնեան համե-
մատաբար կարճ միջոցում հեղինակութիւն ստացած, այժմ՝
գրեթէ ամէնից ժողովրդական վիպասանն է մեզանում—
հարկաւ ո՛չ ամէնից տաղանդաւորը: Իսկական մտքով վէպ
նա մինչեւ այժմ չէր գրել. նորա հեղինակութիւնները վէ-
պիկներ ու գրոյցներ են, միմեանց շատ նման գաղափարով
եւ բովանդակութեամբ. ըայց շատ են կարդացուում, որով-
հետեւ այդ գաղափարը շատ մօտ է ընթերցող հասարակու-
թեան սրտին եւ այդ բովանդակութիւնը անջնջելի եւ միշտ
կենդանի տպաւորութիւնների հետ կապուած: «Մրրկի սուր-
բը», կարելի է ասել նորա առաջին մեծ վէպն է, իսկա-
կան վէպը, որի դեռ միայն մի մասն է տպուած. այստեղ
եւ, ինչպէս կարելի է սպասել, աւելի որոշ կերպով երեւան
են գալիս նորա գրչի գօրեղ եւ պակասաւոր կողմերը:
Ահարոնեան մեր այն, առանձնապէս համակրելի, վիպա-
սաններից մէկն է, որ հայ շրջապատի մէջ է մեծացել,
հայ ժողովրդի հետ ապրել եւ գիտէ զգայուն սրտով սրճա-
գանք տալ նորա վշտին եւ ուրախութեան, ընական գոյնե-

ըով պատկերացնել նորա լաւ ու վատ յատկութիւնները՝ առաքինութիւններն ու մոլութիւնները: Գեղարուեստի տեսակէտից կարելի է հարկաւ շատ թերութիւններ մատնացոյց անել նորա վէպի մէջ. շարժում՝ քիչ է այստեղ, գործողութիւններն անհրաժեշտ հետեւականութեամբ միմեանց չեն յաջորդում, կանոնաւոր զարգացում՝ ցոյց չեն տալիս, այլ պտտուում են կարծես նոյն առանցքի շուրջը. խոր հոգեբանական դիտողութեան տեղ ընծում են ձգձգուած խորհրդածութիւններ, ամենապարզ քաներին խորհրդաւոր կերպարանք է տրուում, հասարակ պատկերացումները սրուում՝ լարուած երեւակայութեան խաղալիք են դառնում. սակայն այդ քուրքի քննութիւնը մեր նպատակից դուրս է: Մեր աչքում յատուկ արժէք ունի վիպասանի քարոյական լրջութիւնը՝ այն քնքոյշ, զգաստ եւ ուշադիր վերաբերմունքը, որով նա հայ գեղջուկի սրտում թագնուած մաքուր զգացմունքները երեւան է հանում, հարուստ հոգեկան կեանքի մի պատկառելի պատկեր ներկայացնում: Նորա վէպի հերոսը առաջնորդուում է այն գիտակցութեամբ, թէ «Դարդը լաւ է քանց ամօթը». իսկ այդպիսի առողջ քարոյական սկզբունքներ ինչամբով պահպանել մի ժողովրդի մէջ եւ հասարակ մարդու քերանով քարոզել կարդացող երիտասարդութեան՝ գնահատելի ծառայութիւն է: Պակաս գնահատելի չէ այն ծառայութիւնը, որ նա մատուցանում է մաքուր, թեթեւ եւ զեղեցիկ հայերէն գրելով:

Երկրորդ տեղը ընծում են Յովհ. Թումանեանի քանաստեղծութիւնները, որոնցից իւրաքանչիւր համարում մի քան կարդալու հաճոյքը նոյնչափ աւելի է, որչափ ժլատ է եղել մինչեւ այժմ՝ հեղինակի մուսան: Առաջին համարում «Փարւանա» վերնագրով մի զեղեցիկ «լեզննդ» պատմելուց յետոյ՝ Թումանեան սկսել է հատուած առ հատուած տալ «Սասունցի Դաւիթ» հանրաձանօթ վէպը, գեղարուեստական չափի տակ դրած: Եւ նորա փոքր ինչ անտաշ, բայց կորովի եւ ուժեղ յանգերի մէջ պատշաճաւոր ու քնական արտայայտութիւն են գտնում Սասնայ քաջերի հերոսական արարքները, հանրամատչելի եւ խիստ գրաւիչ ընթերցանու-

թեան նիւթ դառնում: Ապա գալիս են Յ. Մասեհեանի եւ Աղ. Ժատուրեանի մի քանի թարգմանական քանաստեղծութիւնները, որոնք երկուսն էլ իրրեւ աջողակ թարգմանիչներ պատուաւոր տեղ են ընում մեր այժմեան գրականութեան մէջ, — եւ Աւ. Իսահակեանի ոտանաւորները, որ երբեմն յաջողուած քաներ է տալիս, քայց սովորաբար սպանում է իւր անլիճելի տաղանդը ամուլ ախուլախների մէջ: Ես լաւ ընտրողում է իրեն յունուար 9.-ում գրած հետեւեալ տողերով.

«Միայն ես էի ինձ հասկանում»,

«Եւ ես էլ ինձ չհասկացայ:

Առանձին ուշադրութեան արժանի է նաեւ «Մեր գրականութեան շուրջը» վերնագրով մի յօդուած, Առանձար տորագրութեամբ: Տաճկահայ հեղինակը քննում է ռուսահայերի եւ տաճկահայերի միմեանց գրականութեան փոխադարձաբար անձանօթ լինելու պատճառները՝ սուր եւ ըստ մեծի մասին ծիշտ դիտողութիւններ է անում: Բայց նա չափազանցութեան մէջ է ընկնում՝ իսկական եւ գրեթէ միակ պատասխանատուն այդ ներքին խորթութեան ռուսահայերին համարելով: Ստոյգ է, ռուսահայերը շատ աւելի անտարբեր են առհասարակ դէպի ազգային գրականութիւնը, քան տաճկահայերը, քայց այդ անտարբերութիւնն այնպիսի ծանրակշիռ հանգամանքների հետ է կապուած, որ չի նկատում Առանձար: Ռուս մամուլն ու գրականութիւնը ռուսահայերի համար այն չեն, ինչ որ Ֆրանսիական կամ գերմանական գրականութիւնը Ֆրանսերէն ու գերմաներէն իմացող տաճկահայերի համար: ռուսահայ ընթերցողների մեծագոյն մասը ի՛նչ միայն Ռուսաց դպրոցներում է կրթուել, Ռուսաց գրականութիւնից իւր հոգեւոր սնունդն ստացել, այլ եւ ապրում է այն հասարակական կեանքով, որով զբաղուում է Ռուսաց մամուլը. մինչդեռ տաճկահայերն իրենց ինքնուրոյն հասարակական կեանքն ունին եւ միայն այդ կեանքով զբաղուող մամուլն ու գրականութիւնը

ընտանի են նոցա համար. ֆրանսիականն ու գերմանականը, (հարկաւ նաեւ տաճկականը), նոյնչափ օտար են նոցա, որչափ եւ մեզ համար: Ինչ վերաբերում է Ռուսահայերի մասնաւորապէս դէպի տաճկահայ մամուլը ցոյց տուած անտարբերութեանը՝ սխալ է կրկին ամէն ինչ արհամարհանքով ու լեզուի խորթութեամբ քացատրել: Խորթն իսկապէս տաճկահայերի լեզուն չէ, այլ գրելու եղանակը: Ետքա, կարելի է ասել, գրքեր չունին. ամէն տեսակ գրուածք մամուլն է կլանում, իսկ այդ մամուլը անմատչելի է մեզ եւ խորթ: Մայրենի քարքառի չափ դիւրութեամբ տաճկահայոց լեզուն հասկանալով հանդերձ՝ մենք չենք կարող այնպիսի յօդուածներ կարդալ, որոնց վերնագիրն է օր. «խօսուըտուք», թերթել այն լրագրի համարները, որոնք ամբողջ սիւնեակներ ու էջեր են նուիրում նշանդէքներ, այցելութիւններ, թաղումներ նկարագրելու, ամենագարհուրելի վէպերի թարգմանութիւնն են տպում՝ ամիսներով եւլն: Տաճկահայ հեղինակներն առհասարակ ճարտարութեամբ են գործ դնում շատ խօսելով քիչ քան կամ ոչինչ չասելու արուեստը, եւ այդ արուեստը զինունի դժբաղդարատ Պոլսոյ գրական հրատարակի վերայ, քայց մեր մէջ երբէք չի գնահատուի: Անշուշտ լուրջ մարդիկ եւս շատ կան նոցա մէջ. կան մանաւանդ՝ որ մեծ առաւելութիւն է ռուսահայ գրողների նկատմամբ, հայերէն, Հայոց գրականութիւն եւ պատմութիւն իմացող, Հայ եկեղեցու, Հայի անցեալուին ու ներկայով լրջօրէն հետաքրքրուող մարդիկ, քայց նոցա պատահական գրուածներն ու ուսումնասիրութիւնները միւսների աւելորդախօսութեանց հեղեղի մէջ թաղուում կորչում են. չկայ ո՛չ մի աչքի ընկնող հրատարակութիւն, որ այդպիսի գրուածներ ի մի ամիոփէր, նաեւ ռուսահայերին մատչելի դարձնէր: — Առանձար խոստովանում է, որ Պարոնեանի գործերը ռուսահայերը կարդում են — քայց այն պատճառաւ միայն, որ «Պարոնեան կը խընդացնէ»: Ո՛չ, կասենք դարձեալ. Պարոնեան կեանք կը հասկանայ, եւ խաղը դարձնելով կեանքի շնչին, տգեղ ու անմիտ երեւոյթները՝ կեանքի հետ խաղալու ախորժակը կը փախցնէ: Ետքա ստեղծած ախպերն ու կենդանի պատ-

կերներն ամէն օր մեր աչքի առաջ եղող, զանազան տեղերում՝ այլ եւ այլ ձեւափոխութիւններով կրկնուող իրականութիւնից են առնուած, հոգեբանական սուր դիտողութեամբ եւ զգայուն գրչով լուսարանուած. նա Հայոց Գօգօյն է, որ գիտէ ծիծաղի միջոցաւ հանրամարդկային թերութիւնների վերայ մտածել ու սգալ տալ: Ուստի նորա գրուածները գրեթէ նոյն չափով հաճելի եւ օգտակար ընթերցանութեան նիւթ են ուսասնայի, որչափ եւ տաճկահայի համար. մինչդեռ միւս տաճկահայ հեղինակները իրենց նիւթն առնում են առօրեայ, ըստ մեծի մասին մեզ համար օտար՝ երեւոյթներից. կողմնակի միջոցներով հետաքրքրական դարձնել նոցա գրուածները կարելի չէ: Յիրաւի, եթէ գրականութիւնը ելնէ պոլսական այդ նեղ շրջանակից, մինչեւ այժմ՝ եղածներից աւելի զօրեղ զաւառացի տաղանդներ հանդէս գան, թուն հայ ժողովրդի կեանքով, համազգային ու հանրամարդկային խնդիրներով զբաղուին, յարաբերութիւնն ըստ ինքեան կփոխուի: Անտարքերները զուցէ դարձեալ անտարքեր կման. քայց գոնէ հետաքրքրուողները դրական ըան կգտնեն կարդալու: Անիրաւացի է մեղադրել այդպիսիներին, թէ նոքա մինչեւ այժմ՝ եղածների վերայ ուշադրութիւն չեն դարձրել. Պէշիքթաշլեան եւ Դուրեան տաճկահայ աչքի ընկնող ըմբաստեղծները անձանօթ չեն ուսասնայերին. նոցա թոյլ բեմական գրուածները աւելի յաճախ ներկայացուել են, քան արժէր զուցէ. «Ոհ ինչ անուշ» ու «Երբ որ բացուին» ամէն հայ շրջանների մէջ երգուել ու երգուում են. նոյն իսկ «Մուրճ»ի այս «մարտ» համարի մէջ մի ընդարձակ յօդուած կայ Դուրեանի մասին, մի նման յօդուած եւս անցեալ տարուայ «նոյեմբեր» համարում կար Պէշիքթաշլեանի մասին: Հետաքրքրութիւն գտնել ուրեմն կարելի է, պէտք է միայն նորան սնունդ տալ. իսկ այդ չի լինի տաճկահայ թերթերից ուսասնայ թերթերի մէջ արտատպութիւններ անելով, ինչպէս առաջարկում է Առանձար, այլ արդէն զոյութիւն ունեցող արժէքաւոր գրուածների համար այնպիսի հրատակութիւններ ձեռնարկելով, ինչպէս ներկայումս ձեռնարկուած է Մուրացանի, Թումանեանի, Շիրվանզադէի երկա-

սիրութեանց համար. իսկ ապագայի նկատմամբ, — որոնելով այն գետինը, որ սեփական է ամբողջ հայութեան, եւ աշխատելով այդ գետնի վերայ կանգնել: Այդպիսի գետին ներկայացնում են մեր պատմական անցեալը, մեր եկեղեցին, մեր ժողովրդական կեանքը, որոնցից մանաւանդ առաջին երկուսը չափազանց քիչ են զբաղեցնում դժբաղդաբար հրապարակի վերայ եղած զբաղէտներին: Եթէ տաճկահայ հեղինակն զբաղուի միայն Կ. Պոլսի, ռուսահայը միայն Տփլիսի կամ մի ուրիշ գաւառական կենտրոնի հասարակական կեանքով նորա զրուածքը ազգային զրականութեան բուն սահմաններից դուրս կմնայ եւ աւելի կարող է հետաքրքրել այդ որոշ շրջանում ապրող հայերի օտարազգի հարեւաններին, քան հեռաւոր ազգակիցներին. քայց եթէ պատմական, եկեղեցական խնդիրներ է շօշափում, ժողովրդական կեանքի այնպիսի երեւոյթներ պարզում, որոնք ընդհանուր են եւ սրտի մօտ ամբողջ հայութեան համար՝ իրաւունք կունենայ սպասելու, որ իւր զրուածքն ամէն տեղ ցրուած հայերի ընթերցանութեան նիւթ դառնայ, թէ զաղափարի եւ թէ լեզուի կողմից նոցա հոգեւոր մերձեցմանն օժանդակէ:

Առանձար, քացի յիշեալ յօդուածից, ունի նաեւ մի պատկեր տաճկահայոց կեանքից՝ բաւական աջողակ եւ զգայուն զրչով զծուած, քայց ոչ ազատ տաճկահայ զրականութեան յատուկ սեթեւեթ ութիւններից ու աւելորդախօսութիւններից: Եման մի պատկեր, տաճկական քանտի արհաւիրքները նկարագրող, գրել է Ս. Օտեան: Կան նաեւ մի քանի թարգմանական զրուածներ, որոնց թուում «Արշալուսին» ընդարձակ, դեռ չվերջացած վէպը՝ «Յունաց կեանքից», — ազատութեան ձգտման ու կռուի այն սովորական վէպերից, որ մեզ նման ընթերցողներ հետաքրքրութեամբ կարդում են, քայց գեղարուեստական արժէքի կողմից աչքի ընկնող պակասութիւններ շատ ունին: — Գոհացուցիչ է «Մուրճ»-ի մատենախօսական բաժինը, որ զբաւում են մեծ մասամբ Տ. Յ.-ի համառօտ, կտրուկ, կարեւորը միայն ուշադրութեան առնող եւ, կարելի է ասել, անաչառ քննա-

դատականները:

Պատմագրական ըստին «Մուրճ»-ը շունի, եւ երբ հարկն ստիպում է կողմնակի խնդիրներ պարզաբանելու համար պատմութիւնից տեղեկութիւններ առնել՝ տեսնում ենք, թէ որչափ արհամարհանքի է մատնուած այդ ըստինը «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ աշխատողների կողմից եւ ինչպէս շարաշար կերպով պատժուում է այդ անտեղի ու անբացատրելի արհամարհանքը:—Մի ոմս Ե. Փրանգեան մեր մամուլի մէջ հանդէս է գալիս յաճախ իբրեւ Պատկաստանի ներքին դրութեան ի մօտոյ ծանօթ անձ եւ հնից ու նորից զանազան կարգի տեղեկութիւններ է հաղորդում: Այս անգամ նա նկարագրում է «Պարսկաստանի ասորիներին», եւ սկսում է հեռուից: «Պարսկաստանի ասորիները գաղթել են իրանց հայրենիքից—Ասորեստանից—Պարսկաստան IV եւ V դարերում: Այդ ժամանակներում կրօնական երկպառակութիւնը եւ վէճերը մի կողմից, օտար ազգերի հալածանքները միւս կողմից առաջացրել էին Ասորեստանում մի խառնաշփոթ եւ անորոշ դրութիւն» ... որից շատ աւելի աննախանձելին Ե. Փ.-ի պատմական ծանօթութեանց աշխարհն է ներկայացնում: Կարծես հեքիաթ է պատմածը: Մի զրքի մէջ կարդացել է, որ հին ժամանակ Ասորեստան անունով երկիր է եղել, իսկ այժմ ասորիներին Պարսկաստանում է տեսնում. հարց—ի՞նչը կարող է նոցա գաղթելու պատճառը եղած լինել, եթէ ոչ նոյն այն կրօնական վէճերը, որ մեր լրագրական փիլիսոփաների համար ամէն շարեաց պատճառ են. այն եւս յայտնի է, որ Դ. Ե. դարերում այդպիսի վէճեր շատ են եղել.—եւ ահա պատմութիւնը պատրաստ է. էլ ի՞նչ կարիք կայ զլուխ ցաւացնելու, զրքեր ըմբռնելու, պատմութիւն սովորելու: Սակայն դժբաղդաբար կայ այդ կարիքը եւ նորանից խուսափելն այնպէս հեշտ չէ, ինչպէս զանազան Ե. Փ.-եր երեւակայում են: Այն պատմութիւնը, որ հանձարեղ դատողութիւններով չեն ստեղծում, այլ հին ու փթած յիշատակարաններ բրբրելով ուսումնասիրում ասում է, թէ Ասորեստանի ընդարձակ պետութիւնը, առաջին անգամ արեւելք ու ա-

ընկալուող իրար խառնելուց, ազգերի պատմական կեանքի մէջ անագին դեր կատարելուց յետոյ՝ ընկալ կործանուեց Բրիտտոսից վեց դար առաջ, եւ նորա տեղը բռնեցին փոխելիոյ Բարելացիք, Մարերը, Պարսիկները, Մակեդոնացիք, Պարթեւները, մասամբ Հռոմայեցիք,—իսկ Դ. Ե. դարերում՝ Ասորեստանի նախկին մայրաքաղաքների շրջակայքում՝ ապրողներն անգամ այդ անունը չէին յիշում։ նորա գտնուում էին Սասանեան արքայից արքաների իշխանութեան ներքոյ եւ նոցա մէջ ո՛չ կրօնական երկպառակութիւն կար եւ ո՛չ ազգերի հալածանք։ «Բրիտտոսի մարդնդութեան» մասին վէճեր յառաջ եկան ո՛չ թէ յատկապէս ասորիների, այլ ընդհանրական եկեղեցւոյ, ուրիշ խօսքով այդ եկեղեցւոյ գիտնական ներկայացուցիչ յոյների մէջ։ Նեստոր, որի անունով «նեստորական» է կոչուում այժմ ասորիների մի մասը, 428 թ.-ին Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ եւ 431-ին Եփեսոսի ժողովում քանադրուեցաւ եւ ձգուեցաւ աթոռից։ Նա իւր կրթութիւնն ստացել էր ու կրօնաւոր դարձել Անտիոքում։ իսկ այժմեան ասորիների բուն հայրենիքն է այն Ասորիքը (Cupria), որի գլխաւոր քաղաքն էր Անտիոքը, եւ ո՛չ հին Ասորեստանը (Assyria)։ Այն ուսումը, որի համար Նեստոր քանադրուեցաւ, Անտիոքի նշանաւոր աստուածաբանական դպրոցի ուսումն էր, եւ քնականաբար նորա հետեւողների մէջ ասորիներ եւս կային. բայց սկզբում մի առանձին դեր չէին խաղում։ Այդ ուսման հետեւողների գլխաւոր կենտրոնը դարձաւ դարի վերջերում Եզեսիոյ դպրոցը, որ 489 թ.-ին փակեց եւ նեստորականներին պետութեան սահմաններից հալածեց՝ ո՛չ թէ Թէոդորոս, (այդ անունով Բիւզանդական կայսր ամենեւին չի եղել) այլ Զենոն կայսրը։ Այնուհետեւ նոցա կենտրոնը դարձաւ Պարսից սահմաններում գտնուող Մծքին քաղաքը եւ նորա սկսեցին եռանդով նեստրականութիւն տարածել Պարսկաստանում։ 499 թ.-ին Սելեւկիայում գումարուած մի ժողովով պարսկական եկեղեցին պաշտօնապէս ընդունեց նեստորական ուսումն իբրեւ ուղիղ դաւանութիւն, եւ այդ դաւանութեան հիման վերայ կազմակերպուեց Նեստո-

ըսկանութիւնը, որ արաքների տիրապետութեան ներքոյ աւելի եւս զօրացաւ ու ծաղկեց, եւ դեռ ժ.Գ. ժ.Գ. դարերում ծաղկեալ վիճակի մէջ էր, իւր ազդեցութիւնը տարածել էր մինչեւ Միջին Ասիոյ խորքերը, ընդարձակ թեմեր ու մեծ թուով հետեւողներ ունէր այնտեղ: Թուրքերի ու Թաթարների աշխարհաւեր արշաւանքներից յետոյ քրիստոնէութիւնը հետզհետէ ջնջուեց այդ կողմերում եւ թողեց այն ողորմելի մասցորոյը, որ այժմսան նեստորականներն են: Շատ դժուար է որոշել ուրեմս, թէ նոքա ի՞նչ ազգի սերունդ են. նոքա իրենց «քաղղէացի քրիստոնեաներ» են անուանում եւ դորանով յիշեցնում, որ Ասորա—Բաբելական ազգերի խառնարանից են ելել. ունին զուցէ իրենց երակներում հին ասորեստանցիների, քայց անշուշտ նաեւ պարսիկների եւ ուրիշ արեւելեան ազգերի արիւն, որոնք կրօնական բովի մէջ ի մի են ձուլուել: Իսկ իբրեւ ասորի ներկայանում են նոքա այն պատճառաւ, որ հոգեւոր գերակշռութիւնը ասորական տարրի կողմն է եղել: Եփրեմ անունով առաջնորդ նոքա չեն ունեցել եւ նոցա «Եփրեմեան» կոչելու եւս ո՛չ մի պատճառ չկայ: Եթէ խօսքը ս. Եփրեմ Ասորու մասին է, նա Ասորուց եկեղեցու եւ ասորի եկեղեցական գրականութեան ամենանշանաւոր ներկայացուցիչը լինելով քոյր քրիստոնեաների եւ յատկապէս մեզ Հայերիս համար ամենամեծ եկեղեցական հայրերից մէկն է, որ ապրել է եւ գործել Դ. դարում, երբ եկեղեցւոյ մէջ իրական քաժանութներ դեռ չկային, ո՛չ նեստորականներ գոյութիւն ունէին եւ ո՛չ նոցա կրօնական վէճերը: Ասորիքը քրիստոնէութեան առաջին որրաններից էր. ս. Գրքի մի ամենահին թարգմանութիւնն այդտեղ եղաւ, այդտեղ կարճ միջոց մի ճոխ եկեղեցական գրականութիւն ծաղկեց, որ մինչեւ Զ. դարի միջոցները մրցում էր յունականի հետ եւ գրեթէ տիրապետող էր արեւելքում: Նորակազմ նեստորական եկեղեցին, քանի որ մանաւանդ իւր զխաւոր առաջնորդներից շատերը յետոյ ասորիներ էին, շատ քան իւրացրեց այդ գրականութիւնից, ասորերէնը դարձրեց եկեղեցական լեզու եւ այդպիսով ասորական կերպարանք ստացաւ: Իսկական ասորիներ եւ

քուն ժառանգ ասորի գրականութեան եւ Ասորոց ինքնուրոյն եկեղեցական կեանքի «Նաղուրիներն» են, որոնք ո՛չ թէ Դ. եւ Ե. դարերում՝ քաժանուեցան նեստորականներից ու Թէոդորոս կայսրից հալածուելով գնացին հաստատուեցան Հնդկաստանում, այլ քաժանուեցան ընդհանուր եկեղեցուց Զ. դարում, իբրեւ Քաղկեդոնի ժողովի հետեւանք՝ յունական աշխարհում՝ յառաջ եկած վէճերի պատճառով։ Սկզբում՝ յոյների մեծագոյն մասն եւս հակառակ էր այդ ժողովին, ըայց նոքա կամաց կամաց հաշտուեցան, մինչ Ասորիքում եւ Եգիպտոսում՝ ազգային ինքնուրոյնութեան ճրգտումներ կրօնական համոզումների հետ միախառնուելով, ազգային անկախ եկեղեցական կազմակերպութեան հիմք դարձան։ Կազմակերպողն էր Ասորիքում Յակոբ Բարսաղէոս կամ ծանծաղոս Եղեսիոյ եպիսկոպոսը (543—578 թ.), որի սկսած գործը շարունակուեցաւ նաեւ Եգիպտոսում, եւ այդ երկրների բոլոր «մի ընութիւն» դաւանող քրիստոնեաները նորա անունով կոչուեցան Յակոբիկներ կամ Նաղուրիներ։ Այդ երկու եկեղեցիներն այժմ՝ եւս գոյութիւն ունին, թէեւ նոյնպիսի խեղճ վիճակի մէջ, ինչպէս նեստորական համայնքը, դաւանութեամբ մի են գրեթէ, իսկ վարչական կողմով բոլորովին անկախ միմեանցից։ Եգիպտական կամ Կոպտական եկեղեցւոյ պատրիարքի իրաւասութեանը ենթարկուում է ամբողջ Հարէշտանը. իսկ Յակոբիկ—ասորիների պատրիարքի իշխանութեան ներքոյ, որ նստում է սովորաբար Մարդինի մօտ գտնուած մի վանքում, գտնուում են այժմ՝ յիրաւի մօտ 200 հազար այդպէս կոչուած «Թոմասեան քրիստոնեաներ» Հնդկաստանում։ Բայց սոքա առաջ նեստորական էին եւ միայն ԺԷ. դարի միջոցներում խիստ նեղուելով կաթոլիկ միսիոնարներից, որոնք եկել էին տիրող Պորտուգալացիների հետ՝ Յակոբիկներին մօտեցան. կէս մասը բռնի միջոցներով կաթոլիկութիւն ընդունեց, միւս կէսն աննկատելի կերպով նեստորական դաւանութիւնը մոռացաւ եւ Յակոբիկների հետ միացաւ։

Այսպէս ուրեմն քաւական շատ բան կայ, որի մէջ թէպէտ «Քաղկեդոնի ժողով» եւ ուրիշ նման զարհուրելի,

սքրլաստիքական, քանադրանքի տակ դրուած անուններ-
 եւ դէպքեր տեղ են բռնում, քայց անհրաժեշտ է այնուամե-
 նայնիւ իմանալ, երբ ասորիների պատմական անցեալից
 տեղեկութիւններ հաղորդել ու դատողութիւններ տալ է
 կամենում մէկը. ապա թէ ոչ անհհեթեթութիւններ կատ
 ու հաղդէս կերբէ մի տգիտութիւն, որով յամենայն դէպս
 պարծենալ կարելի չէ: — Ժամանակ է, որ «Մուրճ»-ի խրմ-
 քագրութիւնն ուշադրութիւն դարձնէ այս հանգամանքի վե-
 րայ սկսէ փոքր ինչ ւրջօրէն վերաքերուել դէպի պատմու-
 թիւնն ու պատմական գիտութիւնները:

Ե. Փ.-ի պատմական հասկացողութիւնը տեսնելուց յե-
 տոյ, դժուար կարող ենք քնականաբար հաւատ ընծայել նաեւ
 նորա ազգագրական տեղեկութիւններին: Դորա փոխարէն՝
 շատ լուրջ քնաւորութիւն ունին եւ տարքեր տպաւորութիւն
 են թողնում ԲԺ. Օհանիսեանի «Ճանապարհորդական
 նկատողութիւններ»ը՝ Ծուռուց - Թարիզ: Այստեղ ծաշ-
 կերոյթների, նստել ելնելու մանրամասն նկարագրու-
 թիւններ չեն տրուած, ինչպէս անում են շատ ճանա-
 պարհորդներ, այլ ազգագրական, տեղագրական, հնախօսա-
 կան կարեւորագոյն տեղեկութիւններն են միայն հաղոր-
 դում՝ աչքից հեռու, կրթուած մարդու երես շատ սա-
 կաւ անգամ տեսնող վայրերի մասին. եւ համելի է կար-
 դալ հասկացող մարդու սուր, համառօտախօս դիտողութիւն-
 ներն այնպիսի երեւոյթների նկատմամբ, որոնք գուցէ սովո-
 րական անցորդի ուշադրութեան ամենեւին չէին արժանա-
 նայ, քայց իրօք շատ քան են սովորեցնում, իրական կեանքի
 պատկերը տալիս:

Այսպէս շարունակելով մենք դեռ շատ քան կգտնէինք
 հետաքրքրական «Մուրճ»ի միւս ժամանակակից «հասարա-
 կական եւ քաղաքական» խնդիրներ շօշափող յօդուածնե-
 րի, «Ներքին» եւ «Արտաքին» տեսութիւնների, նոյն իսկ
 «Հրաշալի դար» յաւելուածի մէջ. քայց հարկն ստիպում է
 համառօտել մեր խօսքը: Չենք կարող միայն լռութեամբ ան-
 ցնել «Հայ կնոջ ծայնը» վերնագրով մի յօդուած, որ կցանկա-
 նայինք ամենեւին տպուած չլինէր: — Հայ կինը՝ «Տիկին Հրա-

նոյշ», հասկացել է, որ «կեանքը կռիւ է, զոյութեան կռիւ» եւ ահա ասպարէզ է գալիս՝ կռուելու եւ իւր սեռի իրաւունքները պաշտպանելու: Եւ նա կռուում է քաջաբար, ոգեւորուում է ու չափից աւելի խելօք բաներ ասում: Հարկաւ այդ խելօք բաները նա քաղել է ուրիշ աւելի խելօք օտարազգի տիկնանց ու պարոնների գրուածներից, եւ ո՛չ ինքն է մտքսել ինչպէս պէտք է եւ ո՛չ իւր ընթերցողների համար մտքսելի դարձրել. քայց անախորժն ու ցաւալին այդ չէ, այլ աւելի այն, որ հայ տիկինը անվրդով կերպով գործ է ւածում. քառեր եւ արտայայտութիւններ, որոնք ուղղակի մարդու միսն են սրտացնում, եւ ամենակասկածելի, հակասական ու թունաւոր մտքեր է տալիս, առանց հաշուի առնելու, թէ ո՞ւմ համար են նոքա, ի՞նչ ազդեցութիւն կգործեն եւ ի՞նչ արդիւնք յառաջ կբերեն:— Գուցէ մենք սխալուում ենք, գուցէ շատ օգտակար է եւ հարկաւոր է հայ կնոջն իմանալ, որ իւր տնտեսութեամբ պարապելը խոհարարի ու աղախնի պաշտօն կատարել է միայն, եւ «այդ տեսակէտից նրա դրութիւնը շատ քչով է տարբերուում ընտանի կենդանիների դրութիւնից», օգտակար է գուցէ, գրաւիչ ու զարգացուցիչ օրինակ այսպիսի դատողութիւններ լսելը. «Մենք պախարակում ենք այն կանանց վարմունքը, որոնք սեռական ֆունկցիաները սպրուստի միջոց են դարձրել, քայց մի՞թէ միեւնոյն բանը չի կատարուում ամուսնական կեանքում: Մի՞թէ սեռական յատկութիւնների համար չէ, որ տղամարդը կերակրում է կնոջը: Այդ երկու աստիճանների տարբերութիւնը շատ շնչին է»:— Յամենայն դէպս այդ դատողութիւնները Տ. Հրանոյշի առաջնորդող գաղափարը չեն իրականացնի՝ հայ կնոջը չեն սովորեցնի «տնտեսական անկախութեան» ծգտել եւ հասնել, այլ կօզնեն խլելու նրանից մի փոքրիկ, մի աննշան, քայց մեր աչքում բոլոր տնտեսական անկախութիւններից աւելի արժէքաւոր բան,— նորա պարկեշտութիւնը՝ պարկեշտ ըմբռնումներն ու պարկեշտ բարքը, որին առանց այն էլ ամէն կողմից փտանգներ են սպառնում:— Վիճել բոլոր այն փաստերի եւ եզրակացութիւնների դէմ, որ յառաջ են բերում կանանց դատի պաշտպանները Եւրոպայում եւ

որոնցից խառնեխուռն կերպով օգտուում է Տ. Հրանդշ՝ շատ հեռու կտամէք եւ ապարդիւն էլ կլինէք. մենք պէտք է հասկանանք վերջապէս, որ շատ բան կենսական խնդիր վիճելով Եւրոպայում, մեր մէջ լոկ հարցասիրութեան առարկայ է եւ գործին անտեղեակ, կիսակիրթ ընթերցողների կողմից բոլորովին ուրիշ կերպ է հասկացում: Այնտեղ, ուր դեռ անամուսին եւ անգործ կանանց լեզուներ չեն ստեղծուել, ուր որդիքը սովորաբար իրենց հօր տանն են ապրում եւ ամէն մէկն ստիպուած չէ ամուսնանալուց առաջ նոր տուն, նոր տնտեսութիւն պատրաստել՝ ուր գործարանական կեանք չկայ, չկան մեծամեծ քաղաքներ, վեցյարկանի, մի քանի հարիւր կամ հազար բնակիչ ունեցող տներ, — ելնել իղէալական գոյներով պատկերացնել այն դրութիւնը, երբ բազմամթիւ ընտանիքներ մի ընդհանուր խոհանոց կուսնան, մայրերն իրենց որդւոց մանկական պարտէզ կուղարկեն ու իրենք գործի կերթան, կուռ կյանքին, կամ սովորեցնել կնոջը (ասիացի կնոջ), որ անարգէ ընտանեկան յարկի նուիրականութիւնը, ամուսնական կեանքի սրբութիւնը, եւ իւր սեփական տան հոգս քաշելը, իւր ամուսնու ու իւր երեխաների համար կերակուր պատրաստելը ստորութիւն, աղախնի կամ խոհարարուհու պաշտօն համարէ, նախանձէ այն երջանիկ շրջաններին, որոնց մէջ ապահարգանքներն օրէցօր բազմանում են, — կնշանակէ միայն կարճ մագերով, ծխախոտը քերանին, քարձրածայն քրքշող, իմաստակ, պարսպ, անհաճոյ էակների թիւը բազմացնել եւ վտանգաւոր տարրեր զօրացնել հասարակութեան մէջ:


Ծմարիտ է, ինչ որ այսօր չկայ՝ վաղը, միւսը օրը կարող է լինել, եւ վաղուայ համար նախապատրաստուել պէտք է. քայց այդ տեսակէտից մեզ զբաղեցնող միակ տրջ խնդիրը կանանց կրթութիւնը պէտք է լինի, որի համար առաջնորդող գաղափար «տնտեսական անկախութիւնը» չէ, այլ կնոջ կոչման ուղիղ ըմբռնումը: Ընդունել, որ տնտեսութիւնը, «ամէնից քիչ զբաւուրթիւն ունեցող աշխատանքն» է՝ քոնի եւ «անբնական» կեր-

պով կնոջ վերայ ծանրացած, որ մօր ու տանտիկնոջ պարտականութիւնները աւելի ստոր վիճակի մէջ են դնում կանանց, քան ընտանիք պահելու հոգսերը քաղաքում՝ քաշ եկող տղամարդոց՝ կնշանակէ սկզբից եւ եթ ծռել ինդիքն եւ ունքը շինելու տեղ աչքը հանել: Այո՛, թող կանայք ազատութեան ու ներքին անկախութեան ձգտեն, զգուեն կեղծիքից ու հրապուրիչ լինելու համար գործ դրած քոլոր անվայել միջոցներից, աշխատել սովորեն եւ, երբ հարկն ստիպէ՝ երբէք չքաշուեն հրապարակի վերայ ազնիւ աշխատանքով ապրուստ հայթայթելուց, քայց եւ կին լինելուց չդադարեն, չերեւակային թէ տղամարդու նման շարժելն ու տղամարդու գործեր կատարելն աւելի պատուաբեր քան կլինէր իրենց համար,— չմտածեն առհասարակ, թէ տղամարդն իւր կատարած դերով ու իւր կոչումով քարձր է կնոջից՝ չցանկանան նորա ձեռքից խլել կարծեցեալ առանձնաշնորհութիւնները: Իսկական մտքով առած ո՛չ մի կոչում՝ միւսից քարձր չէ, եւ իւրաքանչիւրը լաւ է ու արժէքաւոր իւր տեղում. քայց եթէ համեմատութեան գանք, գուցէ պէտք էր աւելի կնոջ կոչումը քարձր համարէինք տղամարդու կոչումից: Գեղեցիկ կերպով ընտրողում է այդ կէտը քրիստոնէական քարոյազիտութեան անուանի ուսուցչապետ Հերմանն, որ իւր դասախօսութիւնը կանանց խնդրի մասին վերջացրեց այն դիտողութեամբ, թէ կինը գործ ունի մարդոց՝ կենդանի անձնաւորութիւնների հետ, մինչ տղամարդու գործը իրերի հետ է. ուստի պէտք է նորան որչափ հնար է ընդարձակ ասպարէզ տալ կրթիչ ազդեցութիւն գործելու անձերի վերայ, քնքոյշ եւ հոգատար ձեռքով կնճիռներ հարթելու, իւր նրբքամտութեամբն ու գեղասիրական ծաշակով կարգ ու ներդաշնակութիւն հաստատելու իւր շուրջը, իւր նրբազգացութեամբն ու հոգեքանական սուր դիտողութեամբ վշտեր սփռիլու, ցաւեր դարմանելու, քարքեր ազնուացնելու: Լաւ մայրեր, լաւ տանտիկիներ, լաւ դաստիարակչուհիներ, ի հարկին լաւ հիւանդապահ կանայք եւ այլ քառի քուն նշանակութեամբ կին — գործիչներ պատրաստել պէտք է*:

* Ի դէպ՝ Մուրճ, փետրուար եր. 193, 194. փոխ. Կեօ-

սարդուլութեան ուժերի զուր վատնումն կլինէր եւ այլասե-
ռումն յառաջ կըրեր, եթէ կանայք սկսեն տղամարդու կո-
պիտ եւ չոր աշխատանքներով զբաղուել:—Յանկալի էր, որ
«Մուրճ»ը զգուշանար այս տեսակ խնդիրների ծուռ քացա-
տրութեան տխուր հետեւանքները:

Կ. Վ.



Հայերէն եւ Վրացերէն արձանագրութիւնների ժողովածու:

Պրոփետր Մառը մեզ գրում է Պետերբուրգից, որ առա-
ջիկայ Յունիսի մինչև 15-ը դալու է կովկաս եւ ամբողջ ա-
մառը մնալու է մեզ հիւր: Տարիներից ի վեր ամեն ամառ
յայտնի ուսումնականը գիտնական նպատակով ճանապարհոր-
դութիւններ է կատարում եւ քրքրելով Եւրոպայի, Հայոց
եւ Վրաց վանքերի մատենագրանները, Աթոն, Սինայ, Երու-
սաղէմ՝ ամեն տեղից հեռը բերում է իւր բազմաթիւ ար-
գէն հրատարակուած եւ ծրագրուած ուսումնասիրութիւն-
ների համար հարուստ պաշար: Նա այն ուսումնականների
թուիցն է, որ չափազանց սիրելով կարփնեաի աշխա-
տանք, միևնոյն ժամանակ շարունակ ձգտում են այդ աշ-
խատանքի համար որոնել նորանոր չուսումնասիրուած եւ
մինչև այժմ անձեռնմխելի մնացած յիշատակարաններ: Յի-
շենք նրա ամենավերջին ուսումնասիրութիւնները, որոնք
մեր գրական մի քանի հարցերին, եթէ չասենք վերջնական,
բաւական յաջող յուժում են տալիս, եւ այդ գլխաւորապէս
ճանապարհորդութիւններից ձեռք բերած նորանոր նիւթերի
շնորհիւ: Նա պարզեց Մարիբասի եւ Խորենացու կապը, գտել
է եւ հրատարակելու է Ազաթանդեղոսի պատմութեան արա-
բերէն բնագիր, որը հաստատուն կռուաններ է տալիս Ազա-
թանդեղոսի գրուածքի սկզբնագրի եւ նրա նախնական ծա-

նիգաբուրգում—պէտք է գրուած լինէր կեօնիգաբերգում. փոխ-
երլանդիւնում—երլանդէնում. փոխ. Տիւրինգէնում—Տիւրլին-
գէնում. իսկ կեօնում համալսարան չկայ: